

Մամլո հաղորդագրություն

ԹԱՐԳՄԱՆՉԻ ՁԱՅՆԸ



Հունվարի 30 մայիսի 03, 2015

Նկարիչներ՝ Էրիկ Բյունգեր, Լուիս
Քեմնիցեր, Էգրա Էրսեն, Յակուպ
Ֆերի, Ռեյներ Գանալ, Դորա
Գարսիա, Ջոզեֆ Գրիջլի, Սյուզան
Հիլեր, Քրիստոֆ Քելեր, Ֆարրիս
Սամին, Ժինեթ Սեդիրա, Սլադեն
Ստիլիսովիչ, Նիկոլին վան
Հերսկամպ, Ֆրենկ Վեստերմայեր և
Սիլվի Բոյգո, Ինգրիդ Վիլդի
Սերինո, Սյու Բինգ

Կուրատոր՝ Մարթին Վալդմայեր
2014 թ. MARCO/FAC
Lorraine/SFKM Երիտասարդ
կուրատորների մրցանակի
դափնեկիր

Ցուցահանդեսի համատեղ
արտադրությունը՝ 49 Nord 6 Est -
FRAC Lorraine, MARCO, Museo de
Arte Contemporánea de Vigo և Sogn og
Fjordane Kunstmuseum

www.fracloorraine.org

Այսօր թարգմանություններն ամենուր են. հեշտացնում են ապրանքների
միջազգային առևտուրը, հնարավոր են դարձնում դիվանագիտական
բանակցությունները քաղաքական առաջնորդների միջև, մեկնաբանում են
մեր ամենօրյա լրատվական հեռարձակումները, թույլ են տալիս առցանց
հաղորդակցումներ երկրների և մայրցամաքների միջև և մեզ ծանոթացնում
են արտասահմանյան կինոնկարներին և գրականությանը: Աշխարհի
մասին մեր գիտելիքների մեծ մասը մեզ է հասել թարգմանության միջոցով.
մինչ գլոբալ հաղորդակցումների և շրջանառության արագությունը և
ինտենսիվությունն աճում են, թարգմանությունների կարիքը մեծանում է:

Թարգմանությունը հաճախ զուգորդվում է կորստի հետ: Ի վերջո, լեզուները
և մշակույթները նույն բաներն ասելու տարբեր ձևեր չեն, այլ տարբեր բաներ
ասելու տարբեր ձևեր են: Ուստի թարգմանությունը միշտ մոտավոր է,
մարդկային փորձառության տարբեր արտահայտությունների միջև
միջնորդի դեր կատարելու անսահմանորեն դժվարին խնդիր: Ուրեմն,
ինչպե՞ս կարող ենք լեզուների հանդիպումները համարել ոչ միայն
մարտահրավեր և դժվարություն, այլև՝ ստեղծագործականության և
ուսումնառության աղբյուր: Ինչպե՞ս կարող ենք աշխարհը հասկանալ այլ
կերպ՝ այլ լեզուներով: Կարո՞ղ է թարգմանությունը լինել քննադատական
կամ նույնիսկ քայքայիչ գործունեության հարթակ:

Այս նախագծի վերնագիրը՝ «Թարգմանչի ձայնը», մատնանշում է երկու
թեմատիկ ուղղություններ: Մյուս կողմից նախագիծը պարունակում է
թարգմանության գործունեությունը և ձայնը տեսանելի դարձնելու
գաղափարը, և թույլ է տալիս, որ թարգմանությունը կենտրոնական տեղ
զբաղեցնի որպես մշակութային տարբերությունների բնույթի մասին
գիտելիքների եզակի աղբյուր: Մյուս կողմից, թարգմանչի կերպարը
դառնում է գլոբալացման լեզվաբանական պայմանների և
հետգաղութատիրական դարաշրջանի կարևոր փոխաբերություն. օտար
լեզուներ սովորելու աճող անհրաժեշտությունը, ուրախությունը և ցավը,
միգրանտների կամավոր և ոչ-կամավոր բազմալեզվությունը, լարված
բախումները «գլոբալ» լեզուների և «տեղական» մշակույթների միջև, հիբրիդ
մշակույթների երևույթը, խոսելը և աշխարհն ընկալելը «ընդգծված
առողջանության»:

Ուրեմն, թարգմանությունը այլև չի նշանակում սոսկ մասնագիտություն
կամ գործունեության տեսակ, այլ ներկայացնում է մարդկային վիճակ և,
ավելի ու ավելի հաճախ, մենք մեզ գտնում ենք թարգմանչի դեր
ստանձնելիս ...

Մարթին Վալդմայեր, London, 14.11.2014